

Մեթոդական ձեռնարկ

ՏԵՔՍԱՅԻՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ
MS Word ԾՐԱԳՐՈՎ

+

Գործնական աշխատանքների փաթեթ

+

Ms Excel-Հաճախ օգտագործվող ստեղծիչների համադրություն

ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԸ

Ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաներ են համարվում ինֆորմացիայի ստացման ու օգտագործման մեթոդների և միջոցների համախումբը, որը հիմնված է հաշվողական և ինֆորմացիոն տեխնիկայի վրա՝ ինֆորմացիոն մեթոդների լայն օգտագործմամբ:

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառումը

Ամենուրեք օգտագործվում են ինֆորմացիոն տեխնոլոգիաները: Այսօր հնարավոր է չի առանց համակարգչի մասնակցության իրականացնել պլանավորման ու կառավարման, գիտահետազոտական ու մշակումների, փորձարարական, նախագծային, դրամապահոցային գործողություններ, ինչպես նաև քրեաբանական, բժշկական, կրթական և այլ աշխատանքներ:

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործման հիմնական նպատակը կայանում է նրանում, որ ավտոմատացվեն վարչարարական և արտադրական աշխատանքները: Ինֆորմացիոն կառավարման գործունեության ավտոմատացման հիմնական միջոց է հանդիսանում հենց անհատական ԷՅՄ-ն: Ծառայողը իր աշխատանքը աշխատանքային տեղում կատարում է տարբեր ինֆորմացիոն գործընթացների կատարման միջոցով, այսինքն՝ ինֆորմացիայի ստացման, գրանցման, կուտակման, ձևափոխման, ստեղծման, արտապատկերման և փոխանցման միջոցներով:

ԷՅՄ-ն ավելի էֆեկտիվ օգտագործում ունի կապի (հաղորդակցության) տարբեր միջոցների հետ համադրությամբ: Հաղորդակցության ժամանակակից միջոցները օգտագործողին թույլ են տալիս օգտագործել լոկալ և գլոբալ ցանցերի ստեղծած հնարավորությունները: Այդ հնարավորությունները հատկապես կարևոր են գրասենյակային աշխատանքների համար, քանի որ ապահովում են ծառայողների ինքնուրույն աշխատանքի ավտոմատացումից անցում կատարել տվյալների բաշխված մշակման:

Ինֆորմացիոն պրոցեսների իրականացման համար անհրաժեշտ են ապարատային և ծրագրային միջոցներ: Տեքստային ինֆորմացիայի մշակման համար զանգվածային օգտագործում ունի **Microsoft Word տեքստային խմբագրիչը**:


ՏԵՔՍԱՅԻՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

Ընդհանուր տեղեկություններ MS WORD տեքստային խմբագրիչի մասին

Գոյություն ունեն տարբեր տեքստային խմբագրիչներ, որոնցից ամենահզոր և մեծ տարածում գտած խմբագրիչ է համարվում Microsoft Word ծրագիրը, որը մտնում է Microsoft Office ծրագրային խմբի մեջ և տեղադրվում է օգտագործողի ցանկությամբ:

Word-ի թողարկումը և աշխատանք փաստաթղթերի հետ



Word ծրագիրը թողարկելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը՝

1. Սեղմել Start սեղմակը Windows-ի վահանակի վրա: Բացվում է գլխավոր մենյուն:
2. Ընտրել **Programms-Microsoft Office** ծրագրային խումբը (որոշ օգտագործողների ցանկությամբ ծրագրային խմբի անունը կարող է փոխված լինել կամ գտնվի հենց **Programms-ում**), որտեղից ընտրել՝  Microsoft Office Word և Word ծրագիրը կթողարկվի (Նկ.1):


Word ծրագրի թողարկման ժամանակ մի քանի վայրկյան էկրանի վրա երևում է ծրագրի ֆիրմային նշանը, որից հետո բացվում է ծրագրի էկրանը՝ դատարկ փաստաթղթի բլանկով, որը մենք կարող ենք լրացնել մեզ անհրաժեշտ ինֆորմացիայով: **Microsoft Word**-ը պարունակում է շատ անհրաժեշտ գործիքներ աշխատանքի համար: Գործիքները կարող են լինել բաց ու մուգ գույների: Բաց գույնը հուշում է այն մասին, որ տվյալ աշխատանքի կատարման ժամանակ իրավունք չունենք սեղմել այդ գործիքի վրա, այսինքն՝ դրանք պասսիվ են և կարող են ակտիվանալ որոշ ռեժիմների ընտրության դեպքում: **Word** խմբագրիչի էկրանը ունի Նկ.1. տեսքը:

Word խմբագրիչի վերնագրի տողի վրա երևում է ակտիվ փաստաթղթի անունը:


Word խմբագրիչի հրամանային մենյուի տողը պարունակում է մենյուներ, որոնք պարունակում են տարբեր հրամաններ: Այդ հրամանները խմբավորված են մենյուների մեջ հետևյալ կերպ.




Այստեղից միկմիկի ձախ սեղմումով տեղափոխվում է Menu Bar-ը, ինչպես նաև մյուս վահանակները՝ իրենց վրայի այդ նույն հատվածից բռնելով և քարշ տալով:




Նկ.1. Word ծրագրի տեսքը և աշխատանքային տեղամասը




File (Փսւլ) մենյուն պարունակում է ֆայլերի հետ օգտագործվող հրամաններ՝ նոր ֆայլի ստեղծում, ընթերցում, պահպանում վերջին փոփոխություններ կատարելուց հետո կամ նոր անուն տալով, կարգավորել թղթի պարամետրերը, տպելուց առաջ դիտել, տպել, ուղարկել ֆայլը որևէ հասցեով, էլեկտրոնային փոստով կամ ֆաքսով, ինչպես նաև ստանալ ընտրված ֆայլի մասին տեղեկություններ:




Edit (Правка) մենյուն պարունակում է այնպիսի հրամաններ, որոնց միջոցով կարելի է փոփոխություններ կատարել տեքստում, ինչպես օրինակ՝ վերացնում կամ վերականգնում է կատարած գործողությունները, նշված տեքստը կամ պատկերը ուղարկում բուֆեր կամ բուֆերից բերում ակտիվ տեղամաս, նշում ամբողջ տեքստը, ջնջում կամ փնտրում անհրաժեշտ տեքստը ու փոխարինում նոր գրությամբ և այլն:




View (Вид) մենյուն պարունակում է այնպիսի հրամաններ, որոնց միջոցով կարելի է փոփոխություններ կատարել Word ծրագրի դեկավարման վահանակի արտաքին տեսքի հետ, ինչպես օրինակ՝ գործիքների վահանակները կամ քանոնը էկրան բերելը, հեռացնելը և այլն:



Insert (Вставка) մենյուն պարունակում է այնպիսի հրամաններ, որոնց միջոցով կարելի է տեքստի մեջ տեղադրել էջի բաժանիչ, ամսաթիվ, ժամանակ, էջի համար, որևէ սիմվոլ, որը չի երևում ստեղծաչափի վրա, ավտոտեքստ, ծանոթագրություն, նկար, բանաձև, ձևավոր տեքստ և մի շարք տարբեր օբյեկտներ, որոնք կարող են ստեղծվել ու բերվել Windows-ի միջավայրում աշխատող ցանկացած ծրագրից կամ օգնող ծրագրերից:



Format (Формат) մենյուն պարունակում է այնպիսի հրամաններ, որոնց միջոցով կարելի է նոր ստեղծվող կամ նշված տեքստի հետ տարբեր ձևափոխություններ կատարել, ինչպես, օրինակ՝ փոխել տառատեսակը, տառերի միջև հեռավորությունը, չափերը, տողերի միջև հեռավորությունը, ցուցակների համարակալումը տարբեր սիմվոլներով ու համարներով, սյուների բաժանումը թերթի տիպի և այլն:



Tools (Сервис) մենյուն պարունակում է այնպիսի հրամաններ, որոնց միջոցով կարելի է փոփոխել տարբեր աշխատանքային ռեժիմներ, ինչպես օրինակ՝ ուղղագրության ստուգման, ավտոուղղման, արտաքին տեսքի և այլն:




Table (Таблица) մենյուն պարունակում է այնպիսի հրամաններ, որոնց միջոցով կարելի է աշխատել աղյուսակների հետ, ինչպես օրինակ՝ աղյուսակների ստեղծում, ձևավորում, ավտոմատ ձևավորում, տողերի, սյուների ավելացում, հեռացում, միացում, դասավորում, հաշվարկներ և այլն: Նշված հրամաններին մասսամբ փոխարինում են նաև «Աղյուսակի գործիքները»:

տեղամասի էլեմենտների վրա հերթով սեղմելով ձախ սեղմակը, Commands (**Команды**) տեղամասում կբացվի գործիքի նկարագրությունը: Անհրաժեշտ հրամանին համապատասխանող գործիքը կարելի բռնել մկնիկի ձախ սեղմակով և քաշել մինչև գործիքների վահանակ ու թողնել, կամ հանել նույն ձևով՝ բերելով գործիքների վահանակից, թողնել *Customize* պատուհանի վրա:








Գործիքների վահանակի բացատրությունը

Standart (**Стандартная**)-Գործիքների վահանակը պարունակում է հաճախակի օգտագործվող հրամաններին համապատասխանող գործիքներ կամ հուշող պատկերներ, որոնց վրա որոշ ժամանակ պահելուց հետո կբացվի հուշող ցուցանակ:


Եթե մենք մկնիկով սեղմենք դրանցից մեկի վրա, ապա կկատարվի հաճախ հանդիպող գործողություններից մեկը: Օրինակ՝ ստանդարտ վահանակի ծայրամասային ձախ սեղմակը կապված է File-New (**Создать документ**) հրամանի հետ, իսկ սեղմակը, որը գտնվում է նրա կողքին, կապված է File-Open (**Открыть документ**) հրամանի հետ: Եթե տեղադրել մկնիկի ցուցիչը ցանկացած սեղմակի վրա, ապա **Word**-ը մկնիկի ցուցիչի կողքին կբերի հուշում, որտեղ կլինի տվյալ սեղմակի մասին կրճատ նկարագրություն:





Գործիքների Standart վահանակը պարունակում է հետևյալ սեղմակները. Սեղմակը Կատարած գործողությունը


	-(New-Создать)	Ստեղծել նոր փաստաթուղթ
	-(Open -Открыть)	Բացել անուն ունեցող փաստաթուղթը էկրանի վրա, որը կարելի է ձևափոխության ենթարկել
	-(Save-Сохранить)	Ակտիվ փաստաթղթի պահպանումը ընթացիկ անվանումով ֆայլում, փոփոխություններ կատարելուց հետո Տպում է ակտիվ փաստաթուղթը թղթի վրա, պրինտերի միացման դեպքում մեկ օրինակ, իսկ տպելու որակը, ռեժիմները և քանակը փոխելու համար ընտրել File-Print
	-(Print Preview-Предварительный просмотр)	Միացնում է տպման նախնական դիտման ռեժիմը, որից պետք է դուրս գալ Close -ով
	-(Spelling-Правонаписание)	Ստուգում է ուղղագրությունը անգլերեն և ռուսերեն տեքստերում
	-(Cut-Вырезать)	Կտրում է նշված հատվածը և տեղադրում է բուֆերում
	-(Copy-Копировать)	Պատճենահանում է նշված հատվածը բուֆերում


 -(Paste-Вставить)


 -(Format Painter-
Формат по образцу)


 -(Undo-
Отменить)

 -(Redo-Вернуть)


 -(AutoFormat-
Автоформат)


 -(Insert Table-
Вставить таблицу)


 - Tables and Borders

 -(Columns-Колонки)

 -(Drawing-
Рисование)

 -(Show/Hide-
Непечатаемые символы)

 -(Zoom Control-
Масштаб)

 -(Help--(Справка?)

Տեղադրում է բուժքերի պարունակությունը թարթվող կուրսորի տեղում ակտիվ տեղանասում:

Ըստ նախապես նշված տեքստի ընտրված ռեժիմների, ձևափոխում է նաև տեքստի այն հատվածը, որը պետք է ստանա միևնույն ձևափոխությունը՝ նրա վրայով մկնիկի ձախը սեղմած ձգելով

Վերացնում է վերջին գործողությունները

Վերականգնում է վերջին վերացված գործողությունները

Ավտոմատ ձևավորում է փաստաթուղթը

Տեղադրում է աղյուսակ, որից բացված ցուցակից պետք է ընտրել անհրաժեշտ քանակի տող և սյուն թույլատրելի սահմանում (սյուների թիվը 31-ից ոչ ավել)

Տեղադրում է տեքստը մի քանի սյուներով ներկայացնելու ռեժիմը թերթային ոճի

Ցույց է տալիս էկրանին կամ թաքցնում Drawing (Рисование) գործիքների վահանակը


Ցույց է տալիս կամ թաքցնում է փաստաթղթում գոյություն ունեցող պարբերությունների, բացակների, տողը փոխելու և տաբուլյացիաներին համապատասխանող նշանները

Տեղադրում է փաստաթղթի մասշտաբը էկրանի վրա

Օգնություն է ցույց տալիս ընտրած գործիքի կամ հրամանի մասին

Formatting (Форматирование)- տեքստի ձևափոխման գործիքներ, որոնց միջոցով կարելի է նախապես ընտրել նոր ստեղծվող տեքստի տառատեսակը, չափերը, հաստությունը, տողերի հավասարությունը՝ աջից, ձախից, մեջտեղից, երկու կողմից և այլն: Ցանկալի է նախապես ընտրել հիմնական տեքստի համար տառատեսակ, իսկ տեքստի ավարտից հետո նշել ու անհրաժեշտ ձևավորում տալ տեքստի առանձին տեղանասերին:

Formatting (Форматирование) վահանակի տեսքը և գործիքների նշանակությունը.



Ֆորմատավորման (Formatting) գործիքների վահանակը պարունակում է հետևյալ գործիքները

Սեղմակը

Կատարած գործողությունը

Normal + Times / -Style

Ցույց է տալիս գոյություն ունեցող ոճերի ցուցակը

Times Armenian -Font

12 -Font Size

B -B-Bold (Полужирный)

I -I-Italic (Курсив)

U -U-Underline (Подчеркнутый)

A -Font Color

-Align Left

-Center

-Align Right

-Justify

-Numbering

-Bullets

Ցույց է տալիս տառատեսակների ցուցակը, որտեղից կարելի է ընտրել անհրաժեշտ տառատեսակը՝ սլաքի վրա սեղմելով

Ցույց է տալիս տառատեսակի չափը, որը կարելի փոփոխել՝ սլաքի վրա սեղմելով և համապատասխան թիվը հավաքելով կամ ընտրելով

Փոխում է նշված կամ նոր ստեղծվող տեքստը կիսահաստի՝ տառի գիծը հաստացնում է

Թեքում է նշված կամ նոր ստեղծվող տեքստը

Ընդգծում է նշված կամ նոր ստեղծվող տեքստը

Թույլ է տալիս փոխել նշված կամ նոր ստեղծվող տեքստի գույնը

Հավասարեցնում է ընթացիկ պարբերությունը կամ տեքստի նշված հատվածի տողերը ձախից

Կատարում է նշված տողերի կամ ակտիվ պարբերության հավասարեցում մեջտեղից

Կատարում է նշված տողերի կամ ակտիվ պարբերության հավասարեցում աջից

Կատարում է նշված տողերի կամ ակտիվ պարբերության հավասարեցում երկու կողմից, բացակները մեծացնելու հաշվին

Ստեղծում է համարակալած ցուցակ, որը կարելի է փոխել նաև հռոմեական կամ այբբենական համարակալման

Ստեղծում է որևէ սինվոլով նշված ցուցակ


Աղյուսակի գործիքները օգտագործվում են աղյուսակների պատրաստման ու ձևավորման համար:



Նկարելու գործիքները՝ Drawing օգտագործվում են նկարներ նկարելու և տեքստի մեջ տեղադրելու համար:



Վիճակների տողը ցույց է տալիս, թե կուրսորը ո՞ր էջի, ո՞ր բաժնի վրա է գտնվում, քանի՞ էջանոց փաստաթուղթ է և տվյալ պահին ո՞ր էջի վրա է գտնվում, թղթի վերին սահմանից քանի՞ սմ հեռավորության վրա է, ո՞ր տողի, ո՞ր սյան վրա է գտնվում:




Ֆայլերի հետ օգտագործվող հրամանները

Նոր փաստաթղթերի ստեղծումը.


1. **File – New – Blank document (Файл - Создать – Документ) -OK** կամ

Փաստաթղթի ընթերցումը սկավառակի վրայից, գրանցումը և պահպանումը

Փաստաթղթի ընթերցումը կատարվում է այսպես.

1. **File– Open (Файл-Открыть)** -գտնել ֆայլը ցուցակից, ընտրելով ֆայլի փնտրման անհրաժեշտ ուղին - **OK** կամ -ը ընտրելով, կրացվի նույն պատուհանը, գտնել ֆայլը ցուցակից – **OK** (Ըստ լռության բացվում է **My Documents** թղթապանակի ցուցակը):

2. **Փաստաթղթի պահպանումը:**

File– Save (Файл –Сохранить) կամ , **Save As...** պատուհանը, որի **File name** տեղանասում հավաքել ֆայլի պարունակությունը հուշող անուն: Այդ անունը կհայտնվի վերնագրի տողում: Ֆայլում փոփոխություններ կատարելուց հետո ժամանակ առ ժամանակ սեղմելով այդ կոճակին, փաստաթուղթը կգրանցվի վերնագրի տողում եղած անունով՝ այսինքն, փոփոխությունները կավելանան այդ նույն անունով ֆայլում:

File– Save As... (Файл - Сохранить как...) բացել կատալոգը, ֆայլին տալ անուն: Այս հրամանով կարելի է միևնույն ֆայլին տալ տարբեր անուններ:

3. **Փաստաթղթերի փնտրումը:**

File– File Search... (Файл - Поиск файла) – պատուհանի աջ կողմում բացված տեղանասում մուտքագրել ֆայլի անունը, ուղին, փնտրելու մեթոդը և **OK**:

Փաստաթղթի էջի սահմանների, գլխագրերի, բաժինների ընտրումը:

Նոր փաստաթուղթ ստեղծելիս միանգամից կարելի է տեքստը հավաքել ըստ լռության ընտրած չափերով, էջերի սահմաններով, համարակալումով և այլ պարամետրերով, որոնք կարելի է փոփոխել ցանկացած պահի: Բայց եթե հայտնի է տեքստի տիպը, ապա այդ փոփոխությունները կարելի է կատարել մինչև տեքստի խմբագրումը սկսելը:

Փաստաթղթի արտաքին տեսքը փոփոխող պարամետրերն են՝ թղթի չափը, էջի գրքային կամ ալբոմի տեսքը, էջի սահմանները, գլխագրերը (էջախորագրերը), էջերի համարները, տողերի հավասարեցումը, սյուների թիվը (թերթային տիպը): Այս ամենը կատարելու համար ընտրել **File-Page Setup (Файл- Параметры Страницы)- Ֆայլի պարամետրերի հաստատում:**

էջի սահմանները կարելի փոխել ինչպես տեքստի առանձին մասերի համար, այնպես էլ ամբողջ փաստաթղթերի համար կամ ընտրել հայելային սահմաններ, որոնք կտպվեն թղթի երկու կողմերին էլ:

էջախորագրերը կարող են պարունակել տեքստ կամ գրաֆիկա: Սովորաբար նրանք տեղադրում են վերևում (**Header**) վերին էջախորագրում կամ գլխագրում: Որևէ էջի գլխագիրը փոխելիս փոխվում են նրա հետ կապված բոլոր գլխագրերը:

Եթե անհրաժեշտ է, որ փաստաթղթի մի մասը արտաքին տեսքով տարբերվի մյուսներից, կարելի է փաստաթուղթը բաժանել բաժինների: Վերը նշված բոլոր փոփոխությունները կազդեն միևնույն բաժնի սահմաններում: Օրինակ, եթե անհրաժեշտ

է, որ տարբեր լինեն գլխագրերը մի քանի առաջին էջերում մնացած էջերի գլխագրերից, պետք է ստեղծել առանձին բաժիններ առաջին էջերի համար և առանձին բաժիններ մնացածների համար: Բաժնի չափերը սահմանափակված չեն՝ առանձին պարբերությունից մինչև ամբողջ փաստաթուղթը: Պետք է նշել բաժնի սկիզբը և վերջը բաժնի ավարտի մարկերի (նշիչի) տեղադրումով:

Փաստաթղթի խմբագրման հիմնական գործողությունները

ՏԵՔՍՏԻ ՆԵՐԱԾՈՒՄԸ


Word ծրագրի թողարկման ժամանակ էկրանի վրա հայտնվում է դատարկ աշխատանքային միջավայր 2 էլեմենտներով՝

* Ուղղահայաց թարթող գիծ՝ տեքստի կուրսորը, որը փաստաթղթի մեջ ընդգծում է այն տողը, որտեղ կհայտնվի հավաքած տեքստը և որտեղ կարելի է կատարել ուղղումներ:

* Հորիզոնական գիծ, որը ցույց է տալիս փաստաթղթի վերջը:

Քանի որ մեր նոր փաստաթուղթը դեռևս դատարկ է, ապա այդ երկու մարկերները գտնվում են նույն տեղում: Որպեսզի ներածել տեքստը, անհրաժեշտ է այն հավաքել ստեղնաշարի վրա: Տեքստը հավաքելու ժամանակ էկրանի վրա հայտնվում են սիմվոլները, և կուրսորը տեղաշարժվում է աջ: Երբ կուրսորը հասնում է աջ ծայրին, Word-ը ավտոմատորեն կուրսորը տեղափոխում է հաջորդ տողի սկիզբ: Դա կոչվում է ըստ բառերի տեղափոխում: Enter-ը պետք է սեղմել միայն այն ժամանակ, երբ անհրաժեշտ է անցնել նոր պարբերությանը: Եթե մենք հավաքել ենք շատ տողեր, քան կարող է տեղավորվել էկրանի վրա, ապա Word-ը ավտոմատորեն տեղափոխում է տեքստը մեկ տող վերև, որպեսզի մենք տեսնենք կուրսորը:

ՏԵՔՍՏԻ ԽՄԲԱԳՐՈՒՄ



Մեծ փաստաթղթի տեքստի խմբագրման համար ավելի հարմար է և հեշտ օգտագործել Normal (Обычный) և Outline (Скрыкмыра) ռեժիմները: Այդ ռեժիմներում երևում է միայն փաստաթղթի տեքստը, իսկ մյուս տարածական օբյեկտները, ինչպես օրինակ՝ տեքստի վանդակները և գրաֆիկայի մեծ մասը կլինեն թաքնված:

Այն փաստաթղթերը, որոնք կարող են պարունակել ներդրված օբյեկտներ՝ աղյուսակ, նկար և այլն, անհրաժեշտ է ստեղծել Print Layout ռեժիմում, որի դեպքում երևում են բոլոր սահմանները:

ՏԱՌԱՏԵՍԱԿՆԵՐԻ (ՇՐԻՖՏՆԵՐԻ) ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Տեքստային բնութագրերից մեկը, որով սովորաբար օգտագործողը հաճախակի ձևավորում է փաստաթղթի որոշ մասեր, դա տառատեսակի տիպը և չափն է:

Նույն տառատեսակը կարող է ունենալ տարբեր չափեր: Տառատեսակի չափերը չափվում են պունկտերով (1պունկտը=1/72 դյույմի): Որպեսզի տառատեսակը հասանելի լինի համակարգչի վրա, այն պետք է տեղադրել մի քանի տարածված տառատեսակներով (օրինակ, Times New Roman, Courier կամ Arial), որոնք հաստատվում են ավտոմատ կերպով՝ օպերացիոն համակարգի տեղադրման ընթացքում: Մյուսները պահանջում են լրացուցիչ տեղադրում:

Տեքստին մեծ արտահայտչություն տալու համար կարելի է օգտվել հատուկ էֆեկտներից, որոնց թվին են պատկանում տառատեսակի ձևը, սիմվոլի գույնը, ֆոնը և ստվերը: Օրինակ, որպեսզի նշենք վերնագրերը, կարելի է օգտվել կիսահաստ գրելաձևից, իսկ ծանոթագրության ընդգծման համար՝ շեղատառով: Եթե ենթադրվում է ուղարկել փաստաթուղթը էլեկտրոնային փոստով կամ տպել գունավոր պրինտերով, կարելի է օգտագործել տարբեր գույներ՝ տեքստի և ֆոնի համար:

Խորհուրդ: Ֆորմատավորված էլեմենտների խելամիտ օգտագործումը հասարակ փաստաթղթերին կարող է տալ գրավիչ տեսք, բայց ֆորմատավորված էլեմենտների չարաշահումը զցում է փաստաթղթի տպավորությունը: Օրինակ՝ տարբեր տառատեսակների ավելցուկը միևնույն փաստաթղթում օգագործողի անփորձության նշանն է: Պրոֆեսիոնալները երբեք 2-3 տառատեսակից ավել չեն օգտագործում մեկ փաստաթղթում: Տեքստը, որը հավաքված է միայն վերնագրային տառերից, հոգնեցուցիչ է աչքերի համար:

Շրիֆտի տիպը իրենից ներկայացնում է սիմվոլների տառատեսակ, ինչպիսիք են՝ Arial, Times New Roman կամ Courier: Շրիֆտների մեծամասնության նշանային համակարգը բաղկացած է մեծատառ և փոքրատառ տառերից, թվերից, կետադրական նշաններից, ինչպես նաև լրացուցիչ սիմվոլների ընդլայնված հավաքածուից:



Նկ. 2.

Շրիֆտի տիպի արագ ընտրության համար օգտագործվում է Font (Տիպոգրաֆ), որը գտնվում է Formatting գործիքների վահանակի վրա: Բացելով այն, օգտագործողը

տեսնում է իրական տեսքերը: Ցուցակի վերևում երևում են արդեն օգտագործված տառատեսակները, իսկ կրկնակի գծի տակ՝ համակարգում տեղադրված բոլոր տառատեսակները:

Տեքստը ներածելու համար անհրաժեշտ է հաստատել հիմնական տեքստի տառատեսակի տիպը, չափը, լեզուն, հավաքել, պահպանել որևէ հուշող անունով ֆայլում: Անհրաժեշտ է պահպանել կետադրման կանոնները, այսինքն՝ ստորակետից, կետից, վերջակետից առաջ պրոբել չդնել, իսկ հետո՝ դնել: Բացող փակագծից, չակերտից առաջ դնել, իսկ հետո՝ ոչ: Փակող փակագծից, չակերտից առաջ չդնել պրոբել, իսկ հետո՝ դնել: Տողը փոխելու համար Enter սեղմել միայն պարբերության ավարտից հետո կամ անհրաժեշտության դեպքում (վերնագրերից, ենթավերնագրերից հետո և այլն):

ՏԵՔՍՏԻ ՆՇՈՒՄԸ ԵՎ ՆՇՎԱԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՉԱՆԵԼԸ

Ընտրելով տեքստը, օգտագործողը տեղեկացնում է ծրագրին, որ իր հաջորդ գործողությունը կամ հրամանը ուղղված են լինելու տեքստի այդ բլոկին: Word-ը համապատասխանորեն նախապատրաստվում է՝ ներկայացնելով օգտագործողին հրամանների համապատասխան խումբ: Տեքստը նշվածությունից հանելու դեպքում նրա հետ կատարվող գործողությունները դադարում են: Տեքստի տարրերը կարելի է նշել կամ մկնիկի օգնությամբ կամ ստեղծների համադրությամբ: Աղյուսակում բերված են տեքստի ընտրության գործողությունները մկնիկի օգնությամբ:

Օրինակ՝ որպեսզի բառը գրված լինի կիսահաստ ձևով, անհրաժեշտ է սկզբից այն նշել, իսկ դրանից հետո սեղմել **B** սեղմակը: Տեքստը կարելի է նշել ինչպես մկնիկով, այնպես էլ ստեղծաչափի օգնությամբ:

Տեքստը նշելու եղանակները	
Տեքստը նշելու համար	անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը
Տեքստի ցանկացած տեղամաս	Մկնիկի օգնությամբ Ցույց տալ տեքստի այն մասի սկիզբը, որը անհրաժեշտ է նշել և տեղափոխել մկնիկը մինչև վերջ՝ սեղմած պահած:
Մեկ բառ	Սեղմել 2 անգամ այդ բառի ցանկացած տեղի վրա:
Մեկ նախադասության	Սեղմել Ctrl ստեղծը և սեղմած պահելով, մկնիկի ձախով սեղմել այդ նախադասության ցանկացած տեղում
Մեկ տող	
Մի քանի տող	Սեղմել մկնիկով այդ տողի սկզբում

Մեկ պարբերություն Ամբողջ փաստաթուղթը	Կուրսորը պահել նշվող տողերից ձախ և սեղմած պահելով, տանել մինչև նշվող վերջին տողը 2 անգամ սեղմել այն պարբերության մոտ, որը պետք է նշել: Սեղմել Ctrl ստեղծը և սեղմած պահելով, մկնիկով սեղմել փաստաթղթից ձախ ցանկացած մասում:
Ստեղծաչափի օգնությամբ	
Տեքստի ցանկացած տիրույթ Ամբողջ փաստաթուղթը	Տեղավորել կուրսորը տեքստի սկզբում, սեղմել Shift ստեղծը և սեղմած պահելով, կուրսորը տեղափոխել նշվող տեքստի վերջը ու սեղմել ձախ սեղմակը Սեղմել Ctrl+A ստեղծները

Նշումը չեղյալ հայտարարելու համար պետք է սեղմել էկրանի ցանկացած տեղում նշված մասից դուրս կամ կուրսորը տեղափոխել նրա սահմանից դուրս, օգտվելով ստեղծաչափից:

Տեքստի հեռացումը

Մենք կարող ենք հեռացնել ինչպես մեկ նիշ, այնպես էլ տեքստի որոշ մաս:


- * Կուրսորից աջ գտնվող նիշը հեռացնելու համար պետք է սեղմել **Delete** ստեղծը:
- * Կուրսորից ձախ գտնվող նիշը հեռացնելու համար պետք է սեղմել **Backspace** ստեղծը:
- * Որպեսզի հեռացվի տեքստի մի մասը, պետք է այն նշել, իսկ դրանից հետո սեղմել **Delete** կամ **Backspace** ստեղծը:

Եթե սխալվել ենք հեռացման ժամանակ, ապա մենք կարող ենք տեքստը վերականգնել, օգտվելով **Правка (Edit)**, **Отменить (Undo)** հրամանից: Կախված նրանից, թե ինչպես է հեռացվել տեքստը, այս հրամանը կընդունի կամ **Отменить удаление** կամ **Отменить ввод** տեսքը: 2 դեպքում էլ էֆեկտը կմնա նույնը՝ հեռացված նիշը կվերականգնվի իրեն տեղում: Կարելի է նաև սեղմել **Отменить** սեղմակը կամ սեղմել **Ctrl+Z** ստեղծները: Կարելի է սեղմել **Отменить** սեղմակը մի քանի անգամ, որպեսզի չեղյալ հայտարարվեն վերջին մի քանի գործողությունները:

Տեքստային փաստաթուղթ կազմելիս ցանկալի է ծանոթանալ տեքստի բովանդակությանը, ձևին և կատարել տեքստի հիմնական տառատեսակի, թղթի պարամետրերի ընտրություն: Տեքստի ավարտից հետո միայն կատարել ձևավորման աշխատանքներ: Որոշակի գրություններ արտահայտիչ ու գրավիչ դարձնելու համար

կատարել նշված տեքստի ձևավորում, օգտվելով տեքստի ձևավորման գործիքներից ու հրամաններից:

Գոյություն ունեցող տեքստի շրիֆտների ատրիբուտների փոփոխման գործողությունները տեղի է ունենում հետևյալ կերպ: Տառատեսակների բոլոր հատկությունները տեղադրված չեն գործիքների վահանակի վրա, այլ միայն հաճախակի օգտագործվողները: Մնացածները կարելի է ընտրել Format մենյուի Font հրամանով բացված պատուհանից: Font պատուհանով կարելի է ոչ միայն ընտրել շրիֆտի տիպը, այլ նաև կարգավորել նրա էֆեկտները և պարամետրերը, օրինակ՝ չափը, գույնը, ոճը:



Նկ.3. Font պատուհանը տառատեսակների և նրա հատկությունների ընտրության համար

Աղյուսակ 1

Որպեսզի ընտրենք՝	Հարկավոր է՝
Բառը Նախադասությունը	Երկու անգամ սեղմել բառի վրա: Պահելով «Ctrl» ստեղծը՝ սեղմել նախադասության վրա: Երեք անգամ արագ սեղմել պարբերության վրա կամ երկու անգամ սեղմել պարբերության ձախ կողքի ընտրության գծի վրա:
Պարբերությունը	Սեղմել բլոկի սկզբի բառի վրա, այնուհետև պահելով «Shift» ստեղծը՝ սեղմել բլոկի վերջում: Սեղմել մկնիկով և անցկացնել կուրսորը տեքստով, որը պահանջվում է ընտրել:
Տեքստի անընդհատ բլոկը (ամբողջ բառերը) Ցանկացած անընդհատ տեքստի բլոկ մեկ կամ մի քանի էջերի վրա Տեքստը կուրսորի գտնված կետից մինչև հաջորդ կետ	Պահելով «Shift» ստեղծը՝ սեղմել ընտրության վերջնակետում: Սեղմել ընտրության գծի վրա՝ տողի կողքին (սկզբում պահելով):
Տողը	Եթե կա նշված տեքստ, ապա որևէ տեքստ ներածելու դեպքում նշվածը կփոխարինվի ներածվածի: Հետևյալ աղյուսակում բերված են ստեղծաչափային համադրություններ տեքստի արագ ընտրության համար:

Աղյուսակ 2

Որպեսզի ընտրենք՝	Հարկավոր է սեղմել՝
Մեկ սիմվոլ	<Shift>+ աջ և ձախ սլաքը

Սիմվոլներ կուրսորից մինչև բառի սկիզբը կամ վերջը	<Shift>+<Ctrl>+ աջ կամ ձախ սլաքը
Կուրսորից մեկ տող վերև կամ ներքև	<Shift>+ սլաքը վերև կամ ներքև
Կուրսորից մինչև տողի սկիզբ կամ վերջ	<Shift>+<Home> կամ <End>
Կուրսորից մինչև պարբերության սկիզբ կամ վերջ	<Shift>+<Ctrl>+ աջ կամ ձախ սլաքը
Կուրսորից մինչև տեքստային ֆայլի սկիզբ կամ վերջ	<Ctrl>+<Shift>+<Home> կամ <End>.

Եթե սեղմենք <F8> ստեղծող կամ կրկնակի սեղմենք EXT նշանի վրա՝ վահանակի վիճակների տողում, ապա դրանից հետո կարելի է նշել տեքստը ներածման դիրքից սկսած, ուղղակի ղեկավարման սլաքներով՝ <Home>, <End>, <Page up>, <Page Down>:

ՏԵՔՍՏԻ ԿՏՐՈՒՄ, ՊԱՏՃԵՆՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՆՈՒՄ

Որպեսզի կտրենք կամ պատճենենք և ներդնենք տեքստը, պետք է.

1. Ընտրել տեքստը, որը պետք է տեղափոխել;
2. Edit (որակա) մենյուում ընտրել Cut (Вырезать) կամ Copy (Копировать) հրամանը կամ ստեղծարարից սեղմել <Shift+Delete> կամ <Ctrl+INSERT>: Նշված տեքստը կպահվի Windows-ի տվյալների փոխանակման բուֆերում:
3. Կուրսորը տեղադրել տեքստի ներդրման (տեղադրման) տեղում:
4. Edit-ի մենյուում ընտրել Paste (Вставить) կամ սեղմել <Shift+Insert>:


Փաստաթղթի ներսում մկնիկի օգնությամբ տեքստը տեղափոխելու համար պետք է ընտրել տեքստի պահանջվող բլոկը և մկնիկով այն քարշ տալով տեղափոխել այլ դիրք: Եթե միաժամանակ սեղմենք <Ctrl>, տեքստը կպատճենվի:

MS office փոխանակման բուֆերը

MS office-ը իր փոխանակման բուֆերում կարող է պահել մինչև 12 տարր: Պատճենված տարրերը կգտնվեն փոխանակման բուֆերում, մինչև office-ի մյուս ակտիվ հավելվածների փակելը: Բուֆերի պարունակությունը կարելի է տեսնել Clipboard (Буфер обмена) գործիքով:

ՏԵՔՍՏԻ ՓՆՏՐՈՒՄԸ ԵՎ ՓՈՒՍԱՐԻՆՈՒՄԸ

Փնտրման և փոխարինման համար գոյություն ունեն Edit (Правка) մենյուի Find (Найти) և Replace (Заменить) հրամանները: Find (Найти) և Replace (Заменить) պատուհանը ունի նկ.4. տեսքը:



Նկ.4. Find and Replace (Найти и заменить) երկխոսական պատուհանի բացված տեսքը

Այս ներդիրները համարյա միանման են, բացի նրանից, որ Find (Найти) ներդիրի վրա չկա Replace with (Заменить на) դաշտը և փոխարինման սեղմակները: Երկու հրամանների դեպքում էլ կանչված գործողությունները համարժեք են (նույնն են): Word-ը դիտարկում է փաստաթուղթը և տալիս է փնտրված և գտած առաջին բառը կամ ֆրագան: Եթե փնտրումը տեղի է ունենում Replace ներդիրում, ապա օգտագործողը կարող է ընտրել՝ փոխարինել առաջին գտնված տարրը, փոխարինել բոլոր այդպիսի տարրերը կամ գտնել ու ցույց տալ հաջորդ գտածը: Եթե օրինակ, Replace with դաշտը այդ դեպքում մնացել է դատարկ, ապա այդպիսով կարելի է պատահաբար ջնջել փաստաթղթում տեքստի տրված տողում բոլոր գտնվածները: Այդ տեսանկյունից Replace ներդիրը և հրամանը կարող են տեքստի խախտման վտանգ ներկայացնել, միաժամանակ Find ներդիրը անվտանգ է:

Find and Replace (Найти и заменить) երկխոսական պատուհանը կարող է գտնվել երկու վիճակներում՝ փոքրացված և փռված ամբողջ էկրանով: Որպեսզի փռել պատուհանը, պետք է սեղմել More (Больше) սեղմակը: Փռված պատուհանում փնտրման պարամետրերի կոնկրետացման համար հասանելի կդառնան ղեկավարման լրացուցիչ տարրերը:

Հետևյալ աղյուսակում բերված են փնտրման և փոխարինման հիմնական քայլերը, որոնք կարելի է կատարել Find (Найти) & Replace (Заменить) պատուհաններում.

Աղյուսակ 3


Որպեսզի՝	Հարկավոր է՝
1. Գտնել տեքստը	<ol style="list-style-type: none"> 1. Edit մենյուից ընտրել Find հրահանգը կամ սեղմել <Ctrl+F>: 2. Find what ցուցակի դաշտ ներածել փնտրվող տեքստը: 3. Սեղմել Find next (Найти далее):
2. Գտնել և փոխարինել փնտրվող էլեմենտի մեկ գտնվածը	<ol style="list-style-type: none"> 1. Edit մենյուից ընտրել Replace հրահանգը կամ սեղմել <Ctrl+H> ստեղծը: 2. Find what (Найти) ցուցակի դաշտ ներածել փնտրվող տեքստը:

3. Գտնել և փոխարինել բոլոր մուտք արված տարրերը
 3. Սեղմել Find next սեղմակը:
 4. Replace with (Заменить на) ցուցակի դաշտ ներածել փոխարինող տեքստը:
 5. Սեղմել Replace, որպեսզի փոխարինի հենց նոր գտնվածը:
4. Գտնել և փոխարինել տեքստում օգտագործված որոշակի հատկություններ
 1. Կատարել նախորդ պրոցեդուրայի 1-4 քայլերը:
 2. Սեղմել Replace All (Заменить все) կոճակը:
 1. Կատարել 1 և 2 պրոցեդուրայի քայլերը:
 2. Սեղմել Format (Формат) կոճակը և մենյուում ընտրել տեքստի պահանջվող հատկությունները:
 3. Սեղմել Replace with ցուցակի դաշտում:
 4. Սեղմել Format կոճակը, մենյուում ընտրել տեքստի պահանջվող հատկությունները
 5. Ընտրել պահանջվող պարամետրերը:
 6. Սեղմել Find Next (Найти далее) կոճակը, փնտրումը սկսելու համար:

Սեղմել հետևյալ կոճակներից մեկը.

 - Replace (փոխարինել)- Տեքստի փնտրած և գտած մեկ տարրի ատրիբուտների փոխարինման համար:
 - Replace All (փոխարինել ամբողջը)- փնտրվող տեքստի բոլոր գտնվածների ատրիբուտների փոփոխման համար:
 1. Edit մենյուում ընտրել Replace հրամանը կամ սեղմել <Ctrl+H>:
 2. Սեղմել ցուցակում Find, Special կոճակը ակտիվացնելու համար;
 3. Սեղմել Special (Специальный) կոճակը;
 4. Ընտրել ցուցակում էլեմենտներից մեկը:
 5. Կատարել նախորդ պրոցեդուրայի 3-6 քայլերը:
5. Գտնել և փոխարինել հատուկ էլեմենտներ
 1. Կուրսորը տեղադրել Find what կամ Replace what դաշտերում, որոնցից պահանջվում է հեռացնել ատրիբուտները:
 2. Սեղմել Attribute կոճակը և մենյուում ընտրել No Formatting (Снять форматирование):
6. Հեռացնել նախորդ փնտրման ատրիբուտները
 1. Կուրսորը տեղադրել Find what կամ Replace what դաշտերում, որոնցից պահանջվում է հեռացնել ատրիբուտները:
 2. Սեղմել Attribute կոճակը և մենյուում ընտրել No Formatting (Снять форматирование):


ԱՇԽԱՏԱՆՔ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Microsoft Word-ում պարբերությունը դա ինֆորմացիայի միավոր է, որն ունի ֆորմատավորման սեփական բնութագրեր, ինչպիսիք են՝ հավասարեցումը, ինտերվալը և ոճը: Պարբերությունը միշտ ավարտվում է պարբերության ավարտի  սիմվոլով: <Enter> կոճակը սեղմելիս պարբերությունն ավարտվում է և սկսվում է նորը: Մի քանի գործոնների միջոցով է որոշվում էջում պարբերության դիրքը.

- Պաշտեր (սահմաններ)- տեքստի և էջի եզրերի միջև եղած տարածությունը: Այլ խոսքերով, դաշտերի միջոցով են որոշվում էջի հիմնական տեքստային մասի լայնությունն ու բարձրությունը:
- Բացթողվածքներ- Պարբերության հեռավորությունը էջի աջ կամ ձախ սահմաններից: Ամենից հաճախ առաջին տողի համար ստեղծվում է նոր պարբերություն, կարելի է նաև պարբերությունը տանել դեպի ձախ դաշտ:
- Հորիզոնական հավասարեցում- Պարբերությունը կարող է ունենալ ձախ, աջ հավասարեցում կամ հավասարեցում լայնությամբ (միաժամանակ աջ և ձախ):
- Ուղղահայաց հավասարեցումը որոշվում է տեքստի դիրքով էջի վերևից և ներքևից:

Տողերի և պարբերությունների սահմանների (բացթողվածքների կարգավորումը)

Բացթողվածքները թույլ են տալիս կարգավորել տարածությունը էջի դաշտերի և տեքստի միջև: Պարբերությունների, բացթողվածքների կարգավորման համար հարմար է օգտագործել հորիզոնական քանոնը:





Նկ.5. Սահմանների սխեման տեքստում և մարկերները՝ քանոնի վրա

Որպեսզի պարբերության սահմանները կարգավորվի ըստ օգտագործողի, հարկավոր է.

1. Սեղմել պարբերության վրա:
2. Format (формат) մենյուում ընտրել Paragraph (Абзац) հրամանը:
3. Paragraph (Абзац) պատուհանում բացել Indents և Spacing (Отступы և интервалы):
4. Indentation (Отступ) մասում Left (Слева) և Right (Справа) դաշտեր բերել արժեքները, համապատասխանաբար աջ և ձախ պարբերությունների համար:
5. Եթե անհրաժեշտ է առանձնացնել առաջին տողը, Special (Первая строка) ցուցակում ընտրել կետերից մեկը.
 - First line (Отступ)
 - Hanging (Выступ),

իսկ By (На) դաշտ ներածել համապատասխան նշանակությունը:

Դաշտի ներսում պարբերության կամ պարբերությունների խմբի սահմանները մեծացնելու կամ փոքրացնելու համար կարելի է օգտագործել Increase Indent (Увеличить отступ)  և Decrease Indent (Уменьшить отступ) , որոնք գտնվում են ֆորմատավորման գործիքների վահանակի վրա:

ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՍԱՐԵՑՈՒՄ


Էջի վրա պարբերությունները կարելի է հավասարեցնել հորիզոնական և ուղղահայաց:

Հորիզոնական հավասարեցման պարամետրերը հավաքված են Alignment (Выравнивание) ցուցակում Paragraph (Абзац) պատուհանների Indents and Spacing (Отступы и интервалы) ներդրիչներում:

Word-ը ապահովում է հորիզոնական հավասարեցման հետևյալ տեսակները.

Աղյուսակ 4.

Հավասարեցման ոճը`	Գործողություն`
Left (ձախ եզրով)	Հավասարեցնում է պարբերությունը ձախ դաշտով կամ ձախ սահմանով:
Center (կենտրոնով)	Կենտրոնացնում է պարբերությունը ձախ և աջ դաշտերով կամ սահմանով:
Right (աջ եզրով)	Հավասարեցնում է պարբերությունը աջ դաշտով կամ աջ սահմանով:
Justified (լայնքով)	Հավասարեցնում է պարբերությունը աջ և ձախ դաշտով կամ սահմանով: Վերջին տողը հավասարեցնում է ձախ դաշտով կամ ձախ սահմանով: Այս հրամանը տարածվում է միայն ավտոմատ փոխված տողերի վրա

Տեսանելի ձևով պարբերությունների հավասարեցումը հորիզոնականով կարելի է հսկել և ղեկավարել ֆորմատավորման գործիքների վահանակի օգնությամբ, որոնք ունեն հետևյալ տեսքը` , որը ցույց է տալիս հավասարեցման ընթացիկ ընտրված ձևը:

Ուղղահայաց հավասարեցման պարամետրերը դասվում են ատրիբուտների շարքին: Դրանք պատկանում են ոչ թե առանձին պարբերություններին, այլ ամբողջ տեքստին: Դա նաև հաստատվում է այդ ատրիբուտների տեղադրման տեղով` Page Setup (Параметры страницы) երկխոսական պատուհանի Layout (Ìàåàð) ներդիրով: Word-ը ապահովում է ուղղահայաց հավասարեցման հետևյալ ոճերը.

Աղյուսակ 5

Հավասարեցման ոճը	Գործողություն
Top (վերին ծայրով)	Հավասարեցնում է առաջին պարբերության առաջին տողը վերին դաշտով:
Center (կենտրոնով)	Կենտրոնացնում է տեքստը էջի ներքին և վերին դաշտերի միջև, առանց նրանց միջև ինտերվալների փոփոխության:
Bottom	Հավասարեցնում է էջի վերին տողը ներքին դաշտով:

(ներքին ծայրով)

Justified


(բարձրությամբ)

Էջի տեքստը հավասարաչափ բաշխվում է վերին և ներքին դաշտերի միջև՝ պարբերությունների միջև ինտերվալների, նկարների և այլ օբյեկտների փոփոխման հաշվին: Եթե վերջին էջում ընդհամենը մեկ պարբերություն կա, ապա այն հավասարեցվում է վերին ծայրով:


Տեքստի ուղղահայաց հավասարեցման համար հարկավոր է.

1. File (Փայլ) մենյուում ընտրել Page Setup (Параметры страницы) հրամանը և բացել Layout (Макет) ներդրիչը:
2. Vertical Alignment (Вертикальное выравнивание) ցուցակում ընտրել վերը նշված ոճերից մեկը:


Ուղղահայաց հավասարեցման ձևերը ցույց տանք նկ. 6.-ով



Top



Center



Justified


Նկ. 6. Ուղղահայաց հավասարեցման ձևերը

ՏԱՌԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ ԵՎ ԶԵՌԱՑՈՒՄ

Word -ը հնարավորություն է տալիս ստեղծել տառեր, որոնք զբաղեցնում են մեկից տաս տող:

Պարբերությանը տառ ավելացնելու համար հարկավոր է.

1. Սեղմել պարբերության վրա և Format (Формат) մենյուում ընտրել Drop Cap (Буквица) հրամանը:
2. Drop Cap (Буквица) դիալոգային պատուհանում Position (Положение) հատվածում ընտրել տառատեսակներից մեկը:
 - Dropped (В тексте)-տառը կբաշխվի պարբերության մարմնում:
 - In Margin (На поле)-տառը կբերվի էջի դաշտ:
1. Options (Параметры) մասում կարելի է ընտրել տառի շրիֆտը, կարգավորել նրա չափը (զբաղեցվող տողերի քանակը), հեռավորությունը տառի և տեքստի մնացած



պարբերության միջև: Տառի հեռացման համար պետք է Position (Положение) մասում ընտրել None (Нem) էլեմենտը:


ՍԱՐՄԱՆԱԳԾԵՐ, ԼՑՈՒՄ ԵՎ ՆՇՈՒՄ ԳՈՒՅՆՈՎ

Սահմանները և լցումը- դրանք երկու ֆունկցիաներ են, որոնք թույլ են տալիս համակենտրոնացնել բաժինները և տեղամասերը փաստաթղթում: Սահմանագծերը ձևավորված գծեր են, որոնք օգտագործվում են տեքստի որոշակի առանձնացված հատվածների եզրագծման համար: Սահմանագծերը թույլ են տալիս ընդգծել փաստաթղթի կարևոր տեղամասերը: Լցումը պահանջվող տեղամասի ֆոնի լցումն է ամբողջ գույնով կամ նախշով: Պարբերությունների կամ տեքստերի բլոկների սահմանների արագ ստեղծման համար անհրաժեշտ է օգտագործել Borders (Границы) կոճակը՝ ֆորմատավորման պանելի վրա: Տեքստը գույնով արագ առանձնացնելու համար նախատեսված է Highlight (Выделение цветом) կոճակը:

Սահմանագծերի և լցման աշխատանքի համար նախատեսված ավելի ընդհանուր գործիքն է Borders and Shading (Границы и заливка) պատուհանը: Դրա համար հարկավոր է Format մենյուում ընտրել Borders and Shading հրամանը: Այստեղ օգտագործողը ստանում է ավելի լայն հնարավորություն սահմանագծերի պարամետրերը ընտրելու, ինչպես նաև գույների և նախշերի ընտրության մեծ հնարավորություն լցման համար:

Սահմանագծեր և լցում կարելի է ավելացնել, ինչպես առանձին պարբերություններին, այնպես էլ տեքստի առանձին տեղամասերին: Դրա համար պարբերության վրա որևէ տեղ սեղմել ձախ սեղմակը: Սահմանների պարամետրերը հավաքված են Borders (Граница) ներդիրի վրա:

Shading (Заливка) ներդիրը պարունակում է գործիքներ տեքստի ֆոնի լցման պարամետրերի որոշման համար: Fill (Заливка) բաժնում կա գույների ոչ մեծ պնակ: Եթե այդ գույները բավական չեն, ապա սեղմելով More Colors (Другие цвета) սեղմակը բացվում է Colors (Цвета) պատուհանը: Նրա մեջ կարելի է ընտրել ստանդարտ գույներ ընդլայնված գունային ցանկից, ինչպես նաև ստեղծել սեփական լցման գույն՝ ըստ օգտագործողի ցանկության: Աշխատելով այս գործիքներով, կարելի է համատեղել լցման և սահմանագծերի պարամետրերը և ստանալ հրաշալի արդյունքներ փաստաթղթի ձևավորման ժամանակ:






Նկ.7. Borders and Shading պատուհանի Borders ներդիրը

Կուրսորի տեղաշարժումը էկրանի վրա

Փաստաթղթերի հետ աշխատելու ժամանակ մեզ հաճախ անհրաժեշտ է լինում կուրսորը տեղաշարժել էկրանի վրա, որպեսզի կարողանանք դիտել տեքստի ուրիշ տեղամասերը կամ ձևափոխություն կատարել նրանց մեջ:

Աղյուսակ 6






Կուրսորի տեղաշարժումը էկրանի վրա	
Որպեսզի կուրսորը տեղաշարժել	Անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունները՝
Մկնիկի օգնությամբ	
1 տող վերև կամ ներքև 1 էկրանով վերև կամ ներքև Վերև կամ ներքև ցանկացած տարածության վրա Ցանկացած երևացող տեղ	Սեղմել ներքև կամ վերև ուղղված սլաքի վրա, որոնք գտնվում են ուղղահայաց քանոնի վրա: Սեղմել վերև  կամ ներքև  ուղղված կրկնակի սլաքի վրա, որը գտնվում է ուղղահայաց քանոնի վրա: Տեղափոխել քանոնի կարգավորիչը  վերև կամ ներքև, որը տեղաշարժելիս կերևա նաև էջի համարը: Սեղմել մկնիկի ձախ ստեղծով այդ տեղի վրա
Ստեղնաշարի օգնությամբ	
Աջ կամ ձախ 1 նիշով Վերև կամ ներքև 1 տողով Աջ կամ ձախ 1 բառով Վերև կամ ներքև 1 պարբերությունով Տողի սկիզբ կամ վերջ Վերև կամ ներքև 1 էկրանով Ընթացիկ էկրանից վերև կամ ներքև Փաստաթղթի սկիզբ կամ վերջ	Սեղմել → կամ ← ստեղները Սեղմել ↑ կամ ↓ ստեղները Սեղմել Ctrl+ → կամ Ctrl+ ← ստեղները Սեղմել Ctrl+↑ կամ Ctrl+↓ ստեղները Սեղմել Home կամ End ստեղները Սեղմել PgUp կամ PgDn ստեղները Սեղմել Ctrl+PgUp կամ Ctrl+PgDn ստեղները Սեղմել Ctrl+Home կամ Ctrl+End ստեղները

Պարբերության հատկանիշները տեղադրելուց հետո էջի նշման ռեժիմում կարելի է տեսնել հորիզոնական քանոնը՝ վերևում և ուղղահայաց քանոնը՝ փաստաթղթի պատուհանի ձախ կողմում:

Հորիզոնական քանոնը կարելի է օգտագործել աղյուսակագրման դիրքի հաստատման համար: Աղյուսակագրման դիրքերը ուղղահայաց սահմանափակիչներն են, որոնք հավասարեցնում են տեքստը: Լռությամբ տրվող աղյուսակագրման դիրքերը բաշխվում են յուրաքանչյուր 1.27սմ (կիսադյույմ)-ում: Քանոնի սկզբի կոճակը, որը կոչվում է աղյուսակագրման ինդիկատոր, թույլ է տալիս տեքստի հավասարեցում կատարել, ընդ որում՝ ինդիկատորի վրայի նշանը ցույց է տալիս ընթացիկ հավասարեցման տիպը (օրինակ, ձախ ծայրով կամ կենտրոնով): Որպեսզի աղյուսակագրման դիրքը հաստատվի, անհրաժեշտ է հավասարեցման տեսակը ընտրել ինդիկատորի օգնությամբ, այնուհետև սեղմել անհրաժեշտ նշանը՝ հորիզոնական քանոնը:

Աղյուսակագրման դիրքը հաստատելով՝ տեղադրել կուրսորը տեքստից ձախ, որը պետք է հավասարեցնել և սեղմել **Tab** ստեղծիկ: Տեքստը կշարժվի հաջորդ աղյուսակագրման դիրքին տրված հավասարեցման հաշվարկով: Օրինակ, եթե տրվել է հավասարեցում կենտրոնով, տեքստը կտեղաշարժվի աջ և կհաստատվի այդպես, որպեսզի աղյուսակագրման դիրքը համընկնի տեքստի կենտրոնին: Այս աղյուսակը պարունակում է աղյուսակագրման տեսակների թվարկումը և նրանց նկարագրությունը:

Աղյուսակ 7

Աղյուսակագրման տեսակը	Նշանը	Անվանումը
Ձախ եզրով		Հավասարեցնում է տեքստը ձախ եզրով, ընդմիջումով:
Կենտրոնով		Հավասարեցնում է տեքստը կենտրոնով, ընդմիջումով:
Աջ եզրով		Հավասարեցնում է տեքստը աջ եզրով, ընդմիջումով:
Բաժանիչով		Հավասարեցնում է տեքստը տասնորդական կետում, ընդմիջումով:
Գծիկով		Հաստատում է ամբողջ պարբերության գծի մեջ տեղադրումը:


Աղյուսակագրման տեսակի ընտրումից հետո սեղմել քանոնին, որտող պետք է հաստատվի աղյուսակագրման դիրքը: Այնուհետև Word-ը հեռացնում է աղյուսակագրման ցանկացած դադարի հաստատումը նրանից ձախ, որը հաստատվում է: Եթե աղյուսակագրման դիրքը պետք չէ, այն հեռացվում է քանոնից՝ քաշելով դեպի փաստաթղթի պատուհանը:

Որպեսզի տեքստը տեղափոխվի աջ աղյուսակագրման հաջորդ դիրքում, բավական է սեղմել **Tab** ստեղծիկ: Օրինակ, եթե հաստատվել է աղյուսակագրումը կենտրոնով,

սեղմել **Tab** ստեղծի՛ն, որպեսզի տեքստը տեղափախվի այնպես, որ նրա կենտրոնը համապատասխանի աղյուսակագրման հաստատմանը:

Քանոնի վրայի նշիչը	Նշանը	Նշանակությունը
Առաջին տողի տողագլուխը ելուստ	▼	Որոշում է պարբերության առաջին տողի դիրքը:
Տողագլխի բացթողվածք ձախից	▲	Որոշում է պարբերության երկրորդ, ինչպես նաև հաջորդ տողերի սկիզբը:
Տողագլխի բացթողվածք ձախից	▬	Որոշում է պարբերության ձախ եզրի դիրքը: Ձախ տողագլխի փոփոխության հետ տեղափոխվում է պարբերության ողջ ձախ եզրը:
Տողագլխի բացթողվածք աջից	▲	Որոշում է դիրքը, որտեղ տեքստը տեղափոխվում է հաջորդ տող: Լռությամբ տրվող ձախ տողագլխի բացթողվածքի նշիչը հաստատվում է էջի աջ դաշտում:

Աղյուսակագրման դիրքերի մոտ հորիզոնական քանոնը միացնում է հատուկ նշիչները որոնք կառավարում են տեքստի տողագլխի բացթողումները էջի դաշտում: Այս աղյուսակը ցույց է տալիս նշիչների ներսի տողագլխի բացթողումների թվարկումը և նրանց նկարագրությունը:



Նկ. 8. Աղյուսակագրման հաստատման օրինակ
ՑՈՒՑԱԿԻ ԱՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՄՈՂԻՖԻԿԱՑՈՒՄ


Ցուցակները կիրառվում են այն դեպքերում, երբ պետք է կազմակերպել կամ կարգավորել ինֆորմացիան, որը իրենից ներկայացնում է էլեմենտների հաշվառում (օրինակ, իրադարձությունների ցուցակ կամ քայլերի հաջորդականություն): Ցուցակները երկու տեսակի են՝ համարակալված և նշիչավորված: Նշիչավորված ցուցակում յուրաքանչյուր էլեմենտ նշվում է դեկորատիվ սիմվոլով, որը կոչվում է նշիչ: Համարակալված ցուցակները օգտագործվում են այն դեպքում, երբ պետք է նշել էլեմենտների քանակը կամ հերթականությունը: Համարակալված ցուցակի էլեմենտները հեռացնելու, տեղափոխելու կամ դնելու դեպքում Word-ը նորացնում է համարակալումը: Եթե ցուցակի էլեմենտները դասավորված են ոչ այն հերթականությամբ, որը պետք է, կարելի է ցուցակները կանոնավորել աճման կամ նվազման կարգով՝ սեղմելով Sort (Сортировать) Table (Таблица) մենյուում:



Word-ը ընդգրկում է ցուցակների մի քանի ստանդարտ հրամաններ, որոնց թվից կարելի է ընտրել անհրաժեշտը: Ցանկության դեպքում կարելի է ստեղծել սեփական ոճ կամ օգտվել նկարներից՝ պատկերանիշերի տեսքով: Ցուցակների մոդիֆիկացումը և տեղադրումը իրականացվում է Bullets and Numbering (Список) պատուհանում, որը բացվում է Format մենյուից:


Ցուցակ ստեղծելը շատ հեշտ է: Բավական է սեղմել տողի սկզբում, մտցնել 1. (համարակալված ցուցակի համար) կամ (պատկերանշված ցուցակի համար) սեղմել բացակ ստեղծիչ, մուտքագրել ցուցակի առաջին էլեմենտը և սեղմել **Enter** ստեղծիչ: Word-ը կստեղծի ցուցակ և կմտցնի կամ պատկերանիշ (աստղիկ) կամ համար ցուցակի մյուս էլեմենտի համար՝ 1. , 2. ...: Մուտքագրել հերթական էլեմենտը կամ սեղմել **Backspace** ստեղծիչ, որպեսզի ավարտվի ցուցակը:

Ցուցակը կարելի է վերափոխել կառուցվածքի, որը ներկայացնում է փաստաթղթի վերնագրերի ցանկ՝ իրենց մակարդակների նշմամբ: Որպեսզի կառուցվածք ստեղծել, տողի սկզբում սեղմել և ներմուծել 1. , սեղմել **Tab** ստեղծիչ, մուտքագրել գլխավոր վերնագիրը և սեղմել **Enter** ստեղծիչ: Մուտքագրել հաջորդ վերնագիրը կամ սեղմել **Tab** ստեղծիչ՝ ենթավերնագիր մուտք անելու համար:


Այս օրինակում ստեղծել պատկերանշված և համարակալված ցուցակներ, տողազլխերը կարգավորումից հանել և օգտագործել բազմամակարդակային համարակալում:

1. Հավաքել տեքստ և առանձնացնել չորս տող:
2. Գործիքների Formatting (Форматирование) վահանակի վրա սեղմել  Numbering (Нумерованный список по умолчанию): Առանձնացված տեքստը կձևափոխվի համարակալված ցուցակի:



3. Format մենյուում սեղմել Bullets and Numbering (Список) հրամանին: Կհայտնվի Bullets and Numbering (Список) երկխոսության պատուհանը՝ բաց Numbered ներդիրով:
4. Սեղմել A, B, C (առաջինը երկրորդ շարքում) տարբերակին և սեղմել OK կոճակին: Թվային համարակալումը փոխվում է տառայինի:
5. Table (Таблица) մենյուում սեղմել Sort (Сортировка): Կբացվի Sort Text (Сортировка текста) երկխոսության պատուհանը:
6. Դնել Ascending (По возрастанию) դրոշակը և սեղմել OK: Ցուցակը կփոխվի:
7. Գործիքների ստանդարտ վահանակում սեղմել  Undo (Отменить) կոճակը: Ցուցակը կընդունի սկզբնական տեսքը:
8. Առանձնացնել երկու տող,
9. Ֆորմատավորման վահանակում սեղմել  Bullets (Àâçèêîïðñ): Նշված տեքստը կվերափոխվի նշիչավորված ցուցակի:




Նկ.9. Bullets and Numbering երկխոսության պատուհանի Bulleted ներդիրը ցուցակների համարակալման համար



Նկ.10. Պարբերությունների դասակարգման երկխոսության պատուհան


10. Ֆորմատավորման գոտում սեղմել  Decrease Indent (Уменьшить отступ) հրամանը: Պատկերանշված ցուցակը կտեղաշարժվի ձախ և կդառնա ցուցակի մի մասը:
11. Ֆորմատավորման վահանակում սեղմել  Increase Indent (Увеличить отступ) կոճակը: Պատկերանշված ցուցակը կտեղավորվի հաջորդ տողի տեքստից աջ:

Նկ.11. Bullets and Numbering երկխոսության պատուհանի Bulleted ներդիրը ցուցակների պատկերանշման համար



12. Format մենյուում սեղմել Bullets and Numbering (Список) հրամանին: Կհայտնվի Bullets and Numbering երկխոսության պատուհանը: Բացել Bulleted ներդիրը:

13. Bulleted (Маркированный) ներդիրի մեջ սեղմել գուճավոր նշիչին և սեղմել OK կոճակը: Մարկերի սիմվոլը կփոխվի:
14. Ցուցիչը տանել համարակալված և պատկերանշված ցուցակների բոլոր պարբերությունների ցանկացած մասերով:
15. Format մենյուում սեղմել Bullets and Numbering (Список) հրամանին, այնուհետև սեղմել Outline Numbered (Многоуровневый) ներդիրին:
16. Սեղմել երրորդ օրինակին երկրորդ շարքում և սեղմել OK կոճակը: Տառային համարակալումը կփոխվի թվայինի, իսկ պատկերանիշերը՝ տառերի:



Նկ.12.Տառային համարակալումից թվայինի անցնելու օրինակ

17. Գործիքների ստանդարտ վահանակում սեղմել Save (Сохранить) կոճակը, որպեսզի պահպանվի փաստաթուղթը:

Գործնական աշխատանք 1


Գործարկել Windows-ի ստանդարտ ծրարեր և կատարել վարժություններ պատուհանների հետ

Քայլ 1. Ընտրել Start⇒ Programms⇒ Accessories⇒ Paint, էկրանին կբացվի համանուն գրաֆիկական խմբագրիչը, որը նախատեսված է կետային նկարներ ստեղծելու և խմբագրելու համար:

Քայլ 2. Ընտրել Start⇒ Programms⇒ Accessories⇒ Word Pad, կբացվի ստանդարտ տեքստային խմբագրիչը, որը նախատեսված է տարբեր լեզուներով տեքստային փաստաթղթեր պատրաստելու համար:

Քայլ 3. Ակտիվացրած պատուհանների վերնագրի տողից բռնել մկնիկի ձախ սեղմակով և տեղափոխել էկրանի ուրիշ հատված, ցուցիչը պահելով պատուհանի եզրային կամ անկյունային հատվածում և երկկողմանի սլաք դառնալուն պես ձախով մեծացնել կամ փոքրացնել:


Քայլ 4. Windows-ում հնարավոր է միաժամանակ ակտիվացնել և բաց պահել այն պատուհանները, որոնց հետ աշխատում եք: Դրա համար ակտիվացնել 2 և ավելի ծրագրեր, մկնիկի աջը սեղմել խնդրագոտու վրա և բացված ցուցակից ընտրել պատուհանների դասավորման հրամաններից որևէ մեկը



Դասավորում է ակտիվ պատուհանները աստիճանաձև
Դասավորում է ակտիվ պատուհանները հորիզոնականով
Դասավորում է ակտիվ պատուհանները ուղղահայացով
Ցույց է տալիս աշխատանքային սեղանը, փոքրացնելով բաց պատուհանները (դա կատարվում է նաև՝ +D-ով, +M –ով, իսկ +Shift+M-ով՝ վերականգնում է փոքրացրած պատուհանները)

Քայլ 5. Paint-ում նկարել որևէ պատկեր և սեղմել Close կոճակը, բացված հարցման պատուհանում ընտրել No կոճակը, այսինքն՝ հրաժարվել հիշողություն տանելուց:

Քայլ 6. Word Pad-ում հավաքել Ձեր անուն, ազգանուն, հայրանունը՝ անգլերենով: Պահպանելու մասին հարցմանը պատասխանել՝ Yes: կբացվի Save As անունով պատուհան, որի File name տեղամասում հավաքել անուն և սեղմել Save կոճակը: Ըստ լռության այն կպահպանի My Documents-ում:




Քայլ 7. Նորից գործարկել Word Pad-ը, ընտրել File⇒ Open, բացված պատուհանում գտնել Ձեր կողմից տրված անունով ֆայլը, ակտիվացնել և սեղմել Open կոճակը: Այդ ֆայլը կարելի է բացել նաև My Documents-ից:


Գործնական աշխատանքներ՝ 2, 3

1. Ստեղծել նկարի ֆայլ Paint գրաֆիկական խմբագրիչով: Դրա համար կատարել հետևյալ քայլերը.

- Բացել Paint-ը՝ Start⇒ Programs⇒ Accessories⇒ Paint (Пуск⇒ Все программы⇒ Стандартные⇒ Paint):

- Նկարել 3 հատ ուղղանկյուններ (մեկը՝ հաստ, կարմիր գույնով եզրագծված, 2-րդը՝ եզրերը կարմիր գույնով, լցված դեղինով, իսկ 3-րդը՝ միայն կանաչով լցված):

- Ֆայլը պահպանել `sxxankjun.bmp` անունով: Դրա համար ընտրել File⇒ Save հրամանը: Կբացվի Save As անունով պատուհան: Ընտրել My Documents, սեղմել  կոճակի վրա: Կհայտնվի New Folder անունով թղթապանակ, որի փոխարեն հավաքել Ձեր




անունը և Enter, կբացվի այդ անունով թղթապանակը, որի File name տեղամասում հավաքել `sxxankjun` բառը և սեղմել Save կոճակին կամ Enter: Կստեղծվի հուշող անունով նկարի ֆայլ՝ BMP ֆորմատի: Թղթապանակ կարելի է ստեղծել նաև որևէ ազատ տեղամասում աջով բացված ցուցակից ընտրելով՝ New- Folder և տալով անուն:

2. Ստեղծել տեքստային ֆայլ WordPad տեքստային խմբագրիչով: Դրա համար կատարել հետևյալ քայլերը.


- Բացել WordPad-ը՝ Start⇒ Programs⇒ Accessories⇒ WordPad (Пуск⇒ Все программы⇒ Стандартные⇒ WordPad):

- Բացված էջի թարթվող կուրսորի տեղամասում հավաքել՝ «Այս ուղղանկյունները ես եմ նկարել»:

- Պահպանել ֆայլը Ձեր անունով թղթապանակում, ֆայլին տալով նույն՝ `sxxankjun` անունը, միայն այս ֆայլը կպահպանվի `.rtf` ֆորմատով:


- Խնդրագոտուց ընտրել `sxxankjun.bmp` անունով ֆայլը,  գործիքով նշել ուղղանկյունները, ընտրել Edit ⇒ Copy հրամանը, որը նշված տիրույթի պատճենը կպահի հիշողության մեջ:

- Խնդրագոտուց ընտրել `sxxankjun.rtf` անունով ֆայլը, սեղմել Enter և ընտրել Edit ⇒ Paste հրամանը: Նշված նկարը կհայտնվի կուրսորի գտնված տեղում:



Բացել Calculator-ը` Start⇒ Programs⇒ Accessories⇒ Calculator (Пуск⇒ Все программы⇒ Стандартные⇒ Калькулятор):


- Կատարել հաշվարկ` գտնել 2 ցանկացած թվերի գումար:
- Ընտրել Edit⇒Copy, հաշվարկի արդյունքը կպատճենվի հիշողության մեջ:
- Խնդրագոտուց ընտրել uxxankjun.rtf անունով ֆայլը, սեղմել Enter և ընտրել Edit ⇒ Paste հրամանը: Հիշողությունից հաշվարկի արդյունքը կհայտնվի կուրսորի գտնված տեղում:
- Սեղմել Ctrl+S և վերջին փոփոխությունները ավելացնել արդեն անուն ունեցող ֆայլում:




Օրինակներ ինքնուրույն կատարման համար

Հուշում. Նկարում օգտագործված պատկերները բերված են տեքստի ռեժիմում բերված սիմվոլների օգնությամբ: Դրա համար պետք է բացել առանձին ֆայլ, ստանալ պատկերները և պատճենել նկարի մեջ: Սիմվոլները բերել հետևյալ կերպ.

– ընտրել Start⇒ Programs⇒ Accessories⇒ Calculator (Пуск⇒ Все программы⇒ Стандартные⇒ System Tools ⇒ Character Map(Օààèèöà ñèîâîèîâ), Font տեղամասից ընտրել



Webdings, Wingdings սիմվոլներից որևէ մեկը և անհրաժեշտ սիմվոլը պատճենել նկարի ֆայլի մեջ, նախապես տեղ հատկացնելով տեքստի գործիքով և ընտրելով նույն տառատեսակը:



Գործնական աշխատանքներ՝ 4, 5

Լեզուների անցումներով կատարել անգլերեն, հայերեն և ռուսերեն տեքստերի ներածում (ընդունված ձևերի հիման վրա)

THE UCB INSTITUTE OF ALLERGY

Brussels, February 15, 2007

Dear Doctor,

As a participant to the Allergy School "Allergy, from diagnosis to treatment" organised by GA²LEN and EAACI in September/October 2006 in Hannover, the UCB Institute of Allergy has pleasure to offer you a CD-ROM.

- This CD-ROM contains the following material:
- A letter of Dr. Ulrike Raap
- The list of Chairmen and Speakers
- The presentations of the lectures
- Pictures taken during the event

Through different activities such as this one, The UCB Institute of Allergy works towards providing you the best information and educational services in the field of allergy.

The UCB Institute of Allergy concentrates its mission on two specific types of actions:

- to work with international (mainly European) or national organisations to promote awareness of allergy as a public health problem;
- to improve allergy control by giving health professionals and the patients more up-to-date information on allergy.

If you would like to find some more information on the Institute, we invite you to visit our web site (www.theucbinstituteofallergy.com or www.ucbioa.com)

With our very best regards.

Philippe Pilibossian
Head of the Institute

2/03/07

A-Sides տեխնոլոգանական Միավորման
Գլխավոր Տնօրենին

Դիմում

Հարգելի պրն. Տնօրեն

Ես՝ Կառլոս Ճեյմանդիկյանս, ավարտել եմ ճարտարագիտական համալսարանը 1997-ին:
Ստացել եմ Ինժեներ-Տեղեկագնացի որակավորում:

Տիրապետում եմ ռուսերենին ազատորեն, անգլերենին՝ խոսակցական մակարդակով:

Ավարտել նաև Computer Courses Դասնթացներ, ունեմ Քոմպյուտերային Գրագրություն ու
Հաղորդագրություն վարելու ունակություններ:

Խնդրում եմ ընդունել աշխատանքի որպես կազմակերպիչ-խորհրդատու:

Հասցե՝ Երևան, Տարոնի 8-րդ փողոց, Շենք 9

7/1/2020

Президиенту Комплекса Аксаи К. Сартавостикяну
Инженера Джейм Мандрикияна

Заявление

В 2006 году закончил магистратуру Инженерного Коллежа по специальности Космическая Радиосвязь.

Свободно владею армянским и русским языками, а также английским на уровне чтения технической документации.

Обучался на Курсах Компьютерного обучения Computer Course, где обзавелся навыками Компьютерного Производства и обеспечения Деловой Коммуникации.

Прошу допустить к конкурсу на вакантную должность Менеджера и Организатора. Биографическую справку прилагаю.

Тел. 56-34-23

Ванадзор, ул. Налбандяна 15, кб. 45

Գործնական աշխատանք 6

Աշխատանք թղթապանակների և ֆայլերի հետ

1. Աշխատասեղանի վրա ստեղծել թղթապանակ Ձեր անունով:

Աշխատասեղանի (Desktop) վրա ստեղծել մկնիկի աջը, բացված ցուցակից ընտրել New-Folder և ստեղծված համանուն կոճակի անունը փոխել Ձեր անունով:

2. Ձեր թղթապանակում ստեղծել das1.doc անունով որևէ ֆայլ:

Բացել ստեղծված թղթապանակը, ստեղծել մկնիկի աջը, բացված ցուցակից ընտրել New-Microsoft Word Document և ստեղծված համանուն կոճակի անունը փոխել das1.doc:

3. Անվանափոխել das1.doc ֆայլը das2.doc-ի:

Աջը ստեղծել das1.doc ֆայլի վրա և ընտրել Rename հրամանը, ակտիվացված անունը փոխել das2.doc:

4. Տեղափոխել das2.doc ֆայլը My Documents թղթապանակի մեջ:

